

քող երկայն . 'ի միում ձեռին զուսեր զոհին կալեալ , և 'ի միսումն անդ ըզխառնարանն արիւնալից : Այս շուրջ պատեալ ունէր զեղկելի թագաւորն , յորոյ ճառագայթիցն շնային աչկունք կուսին . այլ յետ սակաւուց շիջանէր :

Եւ յորժամ այն աղջամուղջ ծածկեաց յաչացն զղէմն հօրն , և 'ի խորհրդաւոր խաւարէ հնչեաց բարբառս յետին . « Եղրճկ եղուկ , օղջամբ մընա՞ դուստր իմ » , իսկոյն ցոլացաւ և արեգակն : Օ՛հ հի հարեալ մերձենայ Լ'նտիգոնէ , այլ զգենեալն միայն գտանէ զգառնն , և ոչ ինչ այլ . չգոյր ինչ 'ի նշխարաց Եղիպոսի : Լ'յսպէս ահա անհետացաւ յերկրէ որդին Այոսի . շանթակէ՞ղ արդեօք ծախեցաւ , արդեօք յանդո՞ւնդս ընկլուզաւ , եթէ կենդանոյն վերացաւ յԱլիմնոս . խորհուրդք են զոր ծածկեցին 'ի մահացուաց դիք :

Լ'զնուագութ դուստրն Եղիպոսի մնաց մենաւոր , մերթ հիանայր և մերթ վշտանայր . զերիս աւուրս խնդրեաց յայսկոյս և յայն զմարմին հօրն առ ձօնել նմա զուրբ դիահանութեան : 'Վեռ ևս բոցավառ ծխէին կաղնիքն . և ինքն զարհուրագին անցանէր ընդ վայրս սրբեալս 'ի դատաստանաց աստուածոց : Հուսկ յետոյ վաստակաբէկ լեալ զնաց ապաստան անկանել յաղքատին հիւղ հովուի ուրումն ծերոյ , ակն կալեալ պատեհ ժամու ընուլ զվերջին կամս հօրն և երթալ յարքունիս թեսէոսի :

ՊԱԼԼԱՆՇ

ԹԱՐԳՄ . ՍՐԱԳՈՒՆ ԹՂԼԵԱՆ
ԱՂ . ՌԻՄԻ . ՎԱՐԺ .

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Բիգա :

Ս'իջին Խաալիոյ մէջ՝ իր նախնի հաւարակապետութեամբ ու շէնքերովը անուանի Բիգա քաղաքը՝ ատեն մը Եւտրուրիոյ տասուերկու ծաղկեալ քաղաքաց մէկն էր : Ստրաբոն կ'աւանդէ թէ

աս քաղաքս հիմնեցին Տրոյիոյ պատերազմէն ետ դարձող Յոյք : Լ'տեն անցնելէն ետքը Հռովմայեցոյ իշխանութեան տակն իյնելով , Լ'քրիանոս ու Լ'նտոնինոս տաճարներով , թէատրոններով և յաղթական կամարներով զարդարեցին քաղաքը : Երբոր Հռովմայեցոյ տէրութիւնը կործանեցաւ , ինչպէս նոյն մեծատարած իշխանութեան այլ և այլ գաւառները՝ ասանկ այլ Բիգա բարբարոսաց ձեռքն անցաւ , Բրիտանոսի Ե դարուն . իրենցմէ վերջն ալ Լ'նգոպարտացոյ :

Սակայն ժամանակ անցնելէն վերջը ազգութեան ոգին բոլոր Խաալիոյ թերակղզոյն մէջ վառուելով՝ Բիգացիք ալ ոտք ելան , և օտարաց իշխանութիւնը թօթափելով՝ մասնաւոր հասարակապետութիւն կանգնեցին . որով Ս'ենետիկ և Լ'մալֆի քաղաքաց նախանձորքք երևնալով՝ Խաալիոյ պատմութեանց մէջ նշանաւոր եղան իրենց գործքերովը : Բրիտանոսի 1000 թուականին՝ Բիգայի հասարակապետութիւնը հարուստ , մեծարոյ և տիեզերակալ էր : Սարակինոպը՝ շիրնալով անոր նաւական զօրութեանը դէմ դնել , ստիպուեցան Խաալիայէն քաշուիլ : Լ'յս դէպքէն քիչ ատեն ետքը՝ Բիգացիք Սարտենիա կղզոյն տիրեցին , և 1029^ն Սարթագինէ իրենց անձնատուր եղաւ , ու տեղոյն թագաւորը գերի : Լ'էլի մեծամեծ գործոց ձեռք զարկին երբոր խաչակիրք Լ'րեւելք սկսան արշաւել . որով լիբէական ափանց վրայ այլ և այլ հարկաւոր տեղեր գրաւեցին , և շատ դէպքերու մէջ տեղացոց ամբարտաւանութիւնը նուաճեցին : Բալէարեան ու Եւոլեան կղզիք ալ իրենց իշխանութիւնը ճանչցան : Ս' աճառք ումէն կողմանէ Բիգայի նաւահանգստին մէջ կը թափէին . այն նաւահանգստին՝ որուն այսօրուան օրս հագիւ թէ հետքը կըրնաս նշմարել : Ս'իջերկրական ծովուն մէջ՝ իտալական առաջին շահաւաճառն էր Բիգա . ինչուան Բիւզանդիոյ ոսկին առատաբար իր գանձարանին մէջ կը լեցուէր . ուստի երբոր Փրեդերիկոս



Բիզանյի Գերեզմանոցը .

Պարպարոսա կայսրը Խալկոնյ թերա-
կղզին ինջաւ , իբրև Թուքանայի առա-
ջին քաղաք մեծարեց զինքը , ու այլ և
այլ ազատութիւններ շնորհեց :

Սակայն Բիզանյի մտտերը օր օրուան
վրայ կը մեծնար Ղենուվա քաղաքը . ու
երկու դրացի ժողովրդոց անմիաբանու-
թեանը առիթ կ'ըլլար վաճառականու-
թիւնը : Եւս երկպառակութիւնք մեծ-
նալով , ստիպուեցան իրարու դէմ սուր
քաշել , ու Բիզանյի նաւական զօրու-
թիւնը չկրցաւ Ղենուվացոց դէմ դնել ,
ու պատերազմաց հետ իր մեծութիւնն
ալ կորսնցուց : Եւ որովհետև տկար
ժողովրդոց գրեթէ յատուկ է նաև ի-
րենց մէջ անմիաբան ըլլալ , Բիզանյիք
ալ փոխանակ ամէն ուժերնին օտարաց
դէմ բանեցընելու , սկսան իրարու հետ
երկպառակիլ , ու մերթ բռնաւորաց և
մերթ մատնչաց ձեռք իյնելով , վերջա-
պէս հայրենեաց անարժան երկու եղ-
բարք , Յակոբոս և Վերարդոս Բպ-

պիանի՝ Սիլանու Յովհաննէս Սալէանց
ցոյ Սիպրոնթի դքսին ծախեցին Բի-
զանյի հասարակապետութիւնն և երկի-
րը (1399) :

Բայց Փլորենտացիք աչուրնին Բի-
զանյի վրայ տնկած էին , ու Ղինոյ Վար-
բոնի սոսկալի պաշարմամբ նեղի մէջ
ձգեց քաղաքը . և թէպէտ Բիզանյիք
ամէն ուժովնին դէմ կեցան , սակայն
չկրնալով ինչուան վերջը դիմանալ ,
հարկ եղաւ որ անձնատուր ըլլան : Սե-
տիչեանց տոհմը , և մանաւանդ Վոզի-
մոս Ա , ամէն ջանք ըրին քաղաքը ծաղ-
կեցընելու . որ թէպէտ հին մեծութիւ-
նը չկրցաւ նորէն ստանալ , սակայն ան-
նշան քաղաքի պէս ալ չմնաց :

Ղինոյ գետին վրայ շինուած է Բիզա ,
բերրի և ընդարձակ դաշտի մը քով :
Չորս դին եղած պարսպին շրջապատը
երկուքուկէս մղոն է , ու երկու ամուր
բերդեր ունի . գետին վրայ ալ երեք
կամուրջ : Բնակիչքն են 25,000 :

Հէնքերուն մէջ անուանի են Մայր Եկեղեցին, Խաղիոյ գեղեցկագոյն եկեղեցեաց մէկը, որուն շէնքը 1064^{էն} սկըսած է ու 44 տարի տևած . — Հրապարակները, ու Ասպետաց հրապարակին (Piazza dei Cavalieri) մէջ Կողմնու Ա դըբսին վիթխարի արձանը . — Համալսարանը որ նոյն դըբսին հրամանաւը ժ.Չ դարուն մէջ կանգնուած է, ու Խաղիոյ ամենէն հին համալսարաններէն է . — Զանգակարանը որ երևելի է իրեն ճարտարապետութեան թեթևութեանը, մարմարիոններուն աղուորութեանը ու ձեւոյն համար : Բայ աշտարակին ծուռութիւնը այն աստիճանի է որ եթէ վերի ծայրէն դէպ 'ի վար չուան մը երկընցընես՝ չուանը խարսխէն 13 ոտք հեռու կ'իյնայ . և այս ծուռութեան պատճառը հողին ցածնալէն առաջ եկած կը սեպեն . թէպէտև հաւանական չերևնար . որովհետև կամարաց ձգուածքէն ալ յայտնի կը տեսնուի թէ կամօք ծուռ շինուած է : Եթէ մեծ զանգակներ ունի, որոնք ամէն օր կը զարնուին, և վտանգ մը հանդիպած չէ . որով Պոնանոյ և Սիլիկոյ ճարտարապետաց հրամանութիւնը և արուեստին մեծութիւնը կ'երևնայ :

Բիզայի շէնքերուն մէջ նշանաւորներէն է նաև Գեբեյանոյ (Campo Santo), որուն պատկերն է հոս երևցածը : Երբքտասաներորդ դարուն սկիզբները Բիզայի իրենց մէկ յաղթութեանը անմահական յիշատակ մը ուզելով կանգնել, հայրենասիրական ու գեղեցիկ խորհուրդ մը եկաւ մտքերնին, իրենց նշանաւոր մարդկանց ոսկերքը ամփոփելու համար գերեզմաննոց մը շինել : Բայ խորհուրդը՝ ժամանակին արժանի մեծագործութեամբ ու հարստութեամբ մէկէն 'ի գործ դրուեցաւ : Երբորդ խաչակրաց ատեն՝ յիսուն նաև Բրեւելք խրկեցին՝ որպէս զի մեր սուրբ կրօնից յիշատակներովը սրբազանուած Պաղեստինի հողէն Բիզա փոխադրեն : Բայնչափ հողը տարածելով այն հրապարակին մէջ ուր արդէն մայր եկեղեցին ու զանգակատունը շինուած էր, տասը հա-

զար ոտք տարածութիւն ունեցող երկիր մը՝ այն հողով ինը ոտք բարձրացուցին, ու Յովհաննէս Բիզանոյին ճարտարապետութեամբը այս նշանաւոր գերեզմաննոցը կառուցին : Օւզահեռական ձև մը ունի, երկայնութիւնը 450 ոտք է, ու լայնութիւնը 140 . 62 կամար ունի թեթև գոթական ճարտարապետութեամբ, ու 66 մեծ կամարասիւններու վրայ կեցած : Պատերը բոլոր նկարուած են ժամանակին երևելի պատկերահաններու ձեռքով, որոնց մէջ երևելագոյն էին Զիմապուէ, Արկանես, Ղիթիթոյ, և այլն :

Բիզայի հիւսիսային արևելեան կողմը գեղեցիկ վանք մը կայ Կարթուսեան միանձանց, որ աւելի արքունական պալատ մը կը նմանի քան թէ ձգնաւոր միաբանակեցաց տուն : Բայ վանքին շինութեան ծախքը բոլոր է մեր ազգէն հարուստ վաճառական մը, Պետրոս Սիրանտեան, որուն հայրը Սիրանտ (թերևս Սիհրան) Բիզայի քաղաքացի գրուելով՝ տեղացի օրհորդի մը հետ ամուսնացեր է ու անկէց երեք զաւակ ունեցած, երկու մանչ ու մէկմ՝ ալ դուստր : Սանչ զաւակներէն մէկը, Պետրոս, անորդի մնալով, 1363^{էն} մասնաւոր կտակաւ պատուիրեց որ իր ամէն ունեցածը գործածուի՝ Բիզայի վիճակին մէջ Կարթուսեանց վանք մը շինելու . և կտակակատար սահմանեց Բիզայի աւագ եկեղեցւոյն Կիսոս կոչուած քահանան, որ իր կնոջը եղբայրն էր : Կիսոս՝ քաղքին արքեպիսկոպոսէն հրաժան առնելով մէկէն սկսաւ շէնքը շինել, զոր լմընցընելու համար նաև Պետրոսի կինը իր ամէն ստացուածքը տրուաւ : Եւ այն վանքին բարերարաց կարգին մէջ ինչուան հիմա կը տեսնուի նաև Պետրոսի կենդանագիրը, տակը լատին արձանագրութեամբ . Petrus F. Mirantis de Vergine Armenus mercator Pisis hujus Cartusiae fundator. այսինքն Պետրոս Միրանտայ, Կոստի (անուանեալ), հայկազն վաճառական Բիզայի, հիմադիր Կարթուսեան վանացոյ :

